

**ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017թ. գիտական խորհրդի նիստի**

ք.Երևան

15 հունիսի 2017թ.

**Ներկայեմքին՝** գիտխորհրդի 20 անդամներից 19–ը (ներկայաթերթիկը կցված է):

**Նախագահ՝** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. ԺԵ.00.01-«Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար Մարգարիտ Հրանտի Բեգլարյանի «Սպառողական վարքի ձևավորման ռազմավարությունը և մոնիթորինգը որպես դեղագործական շուկայի մենեջմենթի զարգացման կարևոր գործոն» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:  
Զեկուցող՝ Մարգարիտ Բեգլարյան
2. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի գործունեության աշխատակարգի հաստատում:  
Զեկուցող՝ Ռ. Հովհաննեսյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի կուրատորների հաշվետվությունների քննարկում և հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

## ՔՆՆԱՐԿԵՑԻՆ և ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԺԵ.00.01-«Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար Մարգարիտ Հրանտի Բեգլարյանի «Սպառողական վարքի ձևավորման ռազմավարությունը և մոնիթորինգը որպես դեղագործական շուկայի մենեջմենթի զարգացման կարևոր գործոն» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:

**Լսեցին՝** Մ. Բեգլարյանին, ով ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

**Ելույթ ունեցավ** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, գրախոս՝ բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի նախագիծը: Ռ. Հովհաննեսյանը նշեց, որ Մարգարիտ Հրանտի Բեգլարյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է սպառողական վարքի ձևավորման ռազմավարությանը և մոնիթորինգին՝ որպես դեղագործական շուկայի մենեջմենթի զարգացման կարևոր գործոն:

Ներկայացված ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դեղերը, բժշկական նշանակության ապրանքները, առանց որոնց դժվար է պատկերացնել բժշկական օգնությունը, սպառողական շուկայի ամենապահանջված ապրանքների տեսակներից են: Հայաստանի հանրապետությանը բնորոշ են դեղագործական շուկայի (ԴՇ) զարգացման միտումները: Մեր երկրի ԴՇ ունի աճի զգալի ներուժ, սակայն առկա են նաև բազմաթիվ հիմնախնդիրներ (բնակչության դեղորայքային ապահովումը, դեղերի ֆինանսական և/կամ ֆիզիկական մատչելիությունը, կեղծ դեղերի առկայությունը, դեղատոների անհավասարաչափ բաշխումը), որոնք բավականաչափ ուսումնասիրված չեն: Ատենախոսության նպատակն է հանդիսացել Հայաստանի հանրապետության դեղագործական շուկայի, մասնավորապես, մանրածախ դեղագործական կազմակերպությունների զարգացման առանձնահատկությունների բացահայտումը, բնակչության

դեղորայքային ապահովման և որակյալ դեղագործական սպասարկման կազմակերպման կատարելագործման մարքեթինգային ուսումնասիրությունների վրա հիմնված մոտեցումների մշակումը՝ հաշվի առնելով Հայաստանի դեղագործական շուկայում սպառողական վարքի առանձնահատկությունները և դետերմինանտները:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակի հեղինակի կողմից առաջին անգամ

- կատարվել է ՀՀ ԴՇ-ում սպառողական վարքի (ՄՎ) և դրա վրա ազդող գործոնների համալիր ուսումնասիրություն, ինչի հիման վրա մշակվել են ՀՀ ԴՇ-ում ՄՎ-ի մենեջմենթի մոտեցումները:
- մոտիվացիայի ժամանակակից տեսությունների վրա հիմնված մոտեցմամբ ուսումնասիրվել է դեղագործական ոլորտի աշխատակիցների գործունեությունը, որոշվել է նրանց՝ իրենց արհեստավարժ աշխատանքից բավարարվածության աստիճանը և դրա կապը հաճախորդներին ցուցաբերած դեղագործական հոգածության մակարդակի հետ,
- նկարագրվել են դեղերի վերջնական սպառողների վարքի մոդելները:

Ռ. Հովհաննեսյանը նշեց, որ Մարգարիտ Բեգլարյանի կողմից կատարված հետազոտության արդյունքում մշակված գործնական առաջարկությունները թույլ կտան օպտիմալացնել դեղագետների, դեղագործների և դեղագործական ուղղվածության առողջապահության կազմակերպիչների գործունեությունը, բարձրացնել նրանց կողմից մատուցվող դեղագործական տեղեկատվա-խորհրդատվական ծառայությունների որակն, ինչպես նաև բարելավել բնակչության դեղորայքային ապահովումը: Իրականացված հետազոտության արդյունքները թույլ կտան մշակել Հայաստանի դեղագետի և դեղագործի բարոյագիտական վարքականոնը, ինչը կնպաստի դեղագետի կարգավիճակի և դերի բարձրացմանը, ինչպես նաև դեղագործական էթիկայի հիմունքների ներդրմանը: Հետազոտության արդյունքները թույլ են տալիս նաև մշակել դեղագործական ոլորտի զարգացման ազգային հայեցակարգ, որի գերակա ուղղությունները պետք է լինեն դեղերի ներմուծման օպտիմալացումը և ԴՇ-ի ապահովումը անհրաժեշտ որակյալ դեղերով: Առանձին դրույթները հաջողությամբ կարող են ներդրվել «Դեղագործության կազմակերպում և կառավարում» և «Դեղագիտական հոգածություն» առարկաների ուսումնական ծրագրերում:

- Գրախոսը նշեց, որ ատենախոսության վերաբերյալ ունի հետևյալ դիտողությունները.
- ✓ Ատենախոսության ներածության մեջ հեղինակը նշում է, որ. «<...> ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրված գյուտի արտոնագիրը, <...> զետեղված են ատենախոսական աշխատանքի «Հավելված» բաժնում»: Սակայն հավելվածում այդպիսի արտոնագրի պատճենը բացակայում է:
  - ✓ Հեղինակի կողմից առաջարկվում է չեղյալ համարել դեղորայքային շրջանառության ոլորտում գործող ավելացված արժեքի հարկը, քանի որ դրա ներդրման հետևանքով առաջացել և զարգանում է ստվերային ԴՇ, սակայն մեր կարծիքով այս առաջարկի ներդրման իրականացումը կասկածելի է:
  - ✓ Հապավումների ցանկը (հեղինակն այս բաժինն անվանում է «համառոտագրություններ») տեղադրված է 13-րդ էջում «Ներածություն» բաժնից հետո, մինչդեռ ԲՈՀ-ի կանոնակարգի համաձայն այն պետք է տեղադրվի Գրականության ցանկից հետո (տես՝ Ատենախոսության ձևավորման պահանջները. <http://www.boh.am/instructions.php?langid=1>)
  - ✓ Գլուխ 2-րդի 2.2 ենթագլխում հեղինակը նշում է, որ ԴՀ-ների աշխատակիցների և հաճախորդների հարցաթերթային հարցման համար «Հարցաթերթիկները մշակվել են ԱՀԿ-ի և գիտական գրականությունից վերցված ստանդարտ հարցաթերթիկների հիման վրա՝ (<http://www.who.int/healthinfo/sistemas/ Generic IndividualQ.pdf?ua=1>) <...>»: Սակայն, նշված հասցեով տվյալ էջը անհասանելի է (This page cannot be found):
  - ✓ Հեղինակի կողմից առաջարկվող «Դեղատնային հիմնարկ» հասկացությունը հակասում է ՀՀ «Դեղերի մասին» Օրենքին, որտեղ առկա է «դեղատուն՝ դեղատնային գործունեության իրականացման վայր» հասկացությունը:
  - ✓ Գլուխ 3-րդի 3.4 ենթագլխում հեղինակը նշում է. «Ըստ 2012թ. վիճակագրական տվյալների, ՀՀ ԴՇ-ն ներկայացնում են <...> 38 (9,2%) տեղական արտադրողներ» (էջ 117) հղում տալով [www.imshealth.com](http://www.imshealth.com) կայքին: Սակայն նույն ենթագլխի 121-րդ էջում կարդում ենք. «2012թ. Հայաստանում դեղերի արտադրության գործունեություն էր իրականացնում 19 լիցենզավորված մասնավոր սեփականություն հանդիսացող ընկերություններ (հավելված 2)»:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ՝ ակադեմիկոս Սաղյանը, Բ.Գ.Գ. Է. Սեկոյանը, Բ.Գ.Թ. Ս. Վարդապետյանը, ովքեր նշեցին, որ Մարգարիտ Հրանտի

Բեզլարյանի կողմից ներկայացված ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի հանրապետության դեղագործական շուկայի զարգացման արդի և կարևոր հարցերի լուծմանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ արված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում ներկայացված ատենախոսության արժեքը, Այն ավարտուն գիտական աշխատություն է, որը գիտական հիմնախնդրի լուծման մեջ զգալի ներդրում է, ունի գիտագործնական նշանակություն, իր ծավալով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Նշվեց նաև, որ Մ. Բեզլարյանի կողմից կատարվել է ծավալուն գիտական աշխատանք, որն ունի կարևոր կիրառական նշանակություն և առաջարկեցին հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի կողմից ներկայացված կարծիքը:

***Որոշեցին՝ (միաձայն)***

1. Հաստատել Մարգարիտ Հրանտի Բեզլարյանի «Սպառողական վարքի ձևավորման ռազմավարությունը և մոնիթորինգը որպես դեղագործական շուկայի մենեջմենթի զարգացման կարևոր գործոն» թեմայով դոկտորական ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքը:

2. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի գործունեության աշխատակարգի հաստատման մասին:

***Լսեցին՝*** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, գրախոս՝ ր.գ.դ. Ռ. Հովհաննեսյանին, ով գիտխորհրդի անդամներին ծանոթացրեց որակի ապահովման մշտական հանձնաժողովի գործունեության աշխատակարգի նախագծին: Նա նշեց, որ հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1. ԵՊՀ ՖԻ որակի ներքին ապահովման չափորոշիչների, գործընթացների և/կամ ընթացակարգերի կիրարկման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի և գիտական խորհրդի

որակի ապահովման մշտական հանձնաժողովի հետ համագործակցությունը:

2. ՖԻ կրթական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացների համակարգումը և ՖԻ դրանց իրականացման աջակցումը:
3. ՖԻ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատման գործընթացների կազմակերպումը և համակարգումը՝ ծրագրերի արտաքին գնահատման (աուդիտ, հավատարմագրում) գործընթացների շրջանակներում:
4. ՖԻ կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորությունների իրականացումը:

### ***Որոշեցին՝*** (միաձայն)

2.1 հաստատել ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի գործունեության աշխատակարգը:

### **3. Ֆարմացիայի ինստիտուտի կուրատորների հաշվետվությունների քննարկում և հաստատում:**

***Լսեցին*** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի կուրատորներ՝ ք.գ.թ. դոցենտ Կ. Պետրոսյանի, ք.գ.թ. դոցենտ Ժ. Սարգսյանի, ք.գ.թ. դոցենտ Մ. Շեյրանյանի, ք.գ.թ. դոցենտ Ռ. Ադամյանի, ք.գ.թ. դոցենտ Լ. Հարությունյանի, ք.գ.թ. Հ. Սիմոնյանի, ք.գ.թ. Ս. Պետրոսյանի, Գ. Մկրտչյանի և Լ. Բալայանի հաշվետվությունները 2016-2017 ուս. տարում կատարված աշխատանքների մասին: Ելույթ ունեցողները նշեցին, որ հաշվետու տարում հանդիպել են ուսանողների հետ, նրանց տեղեկացրել ռեկտորի՝ 11. 01. 2017թ.-ի թիվ 4/14 հրամանի համաձայն բացակայությունների առավելագույն թույլատրելի քանակի և նկատողությունների ու հեռացման կարգի մասին: Ուսանողների հետ քննարկվել են լուծարքների և ռոտացիայի գործընթացի հետ կապված հարցերը, ուսանողները տեղեկացվել են նաև ուսման վարձավճարների ժամկետների մասին:

*Որոշեցին՝* (միաձայն) դրական գնահատել հաշվետու տարում կուրատորների կողմից կատարված աշխատանքները և հաստատել հաշվետվությունները:

**4. Ընթացիկ հարցեր:**

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան